№ 68 Շաբաթ Յունիսի 20 1887 Շաբաթ Յունիսի 20 № 68

ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՑ **1887** ԹԻՆ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնակայա և Բաղարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տունը։)

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», *իսկ արտասահմանից.* Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Армянская газета „МШАКЪ“ печатаетъ объявленія на армянскомъ, русскомъ и иностранныхъ языкахъ.

ПЛАТА за объявленія на четвертой страницѣ: 2 копѣйки со слова. Съ объявленій печатаемыхъ болѣе *десяти* разъ, дѣлается уступка.

Плата впередъ.

За ТРАУРНЫЯ объявленія на четвертой страницѣ взимается по 2 рубля, на первой страницѣ 4 рубля.

На первой страницѣ „Мшака“ никакія постороннія объявленія КРОМѢ ТРАУРНЫХЪ не печатаются.

Адресъ: ТИФЛИСЪ, редакція газ. „Мшакъ“.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թատրոնների հրդեհները.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ախալցխայի դաւառի արդիւնաբերութիւնը. Նամակ Ախալցխայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրանսիական զինուորական օրինագիծը. Արտաքին լուրեր.— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԱՏՐՕՆՆԵՐԻ ՀՐԴԵՀՆԵՐԸ

—

Ռուսաց առածն ասում է՝ մինչև որ ոբոտը չը որոտայ, մարդը չի խաչակնքվի։

Մինչև որ Թատրոնական հրդեհները չէին պատահում, ոչ ոք չէր մտածում այն հանգամանքի մասին թէ Թատրոնները ամբողջ աշխարհում, առհասարակ, շատ անյարմար կերպով են շինված։ Բարձր և համեմատաբար նեղ շինութիւններ, բազմայարկանի, նեղ անցքերով, չափից դուրս շատ ժողովուրդ իրանց մէջ պարունակող և համեմատաբար շատ քիչ դռներով,—ահա մեծ մասամբ Թատրոնական շինութիւնների յատկանիշը։ Մարդիկ Թատրոններ շինելու ժամանակ մտածում են միմիայն այն բանի մասին, որ Թատրոնական դահլիճը, որքան հնար է, հանդիսականների աւելի մեծ բազմութիւն կարողանայ իր մէջ ամփոփել, ուրեմն և աւելի եկամուտ բերել, առանց մտածելու թէ ինչ վտանգ է սպառնում այդ հանդիսականների ահագին բազմութեանը հրդեհի ժամանակ.... Դրան պէտք է աւելացնել, որ գազային լուսաւորութիւնը, որ եւրօպական բոլոր Թատրոններում մտցրած է, նշանաւոր կերպով նըպաստում է հրդեհների դէպքերին։ Այժմ միայն սկսում են ուշադրութիւն դարձնել այդ հանգամանքի վրա և ջանք են անում գազի տեղ Թատրոններում էլէկտրական լուսաւորութիւնը մտցնելու։ Նկատված է, նմանապէս, որ մեծ մասամբ հրդեհները սկսվում են բեմից, իսկ բեմից կրակը շատ հեշտութեամբ և շատ շուտով է անցնում հանդիսականների սրահը։ Դրան առաջն առնելու համար առաջարկում են,—և շատ տեղ այդ արդէն մտցրած է,—ունենալ բոլոր Թատրոններում մի հատ մետալական վարագոյր, որ բեմի վրա կրակը յայտնվելուն պէս իջեցնում են և այդպիսով առանձնացնում են բեմը հանդիսականների սրահից։

Բայց վերջին ժամանակները Ֆրանսիայի ինժիներ Գուբէ (Goubet), մի նոր առաջարկութիւն արաւ Թատրոնները հրդեհներից պահպանելու համար և իր այդ գիւտի արած փորձերը կատարեալ աջողութեամբ պակվեցան։ Ահա ինչ է Գուբէի գիւտը. նա անց է կացնում Թատրոնի բոլոր յարկերում երկաթեայ խողովակներ, որոնք ունեն անթիւ, անհամար ծակոտիկներ։ Այդ խողովակները կապված են Թատրոնի նկուղում, կամ Թատրոնից դուրս գտնվող մի մեծ կաթսայի հետ, որտեղ եռ է գալիս ջուրը։ Հենց որ Թատրոնի մի ծայրում յայտնվում է կրակը, անմիջապէս բաց են անում այն խողովակի ծորակը, որ տանում է դէպի այն կողմը, որտեղ եռացել է բոցը և խողովակը անմիջապէս լցվում է ջրի գոլորշիով, որը սկսում է դուրս գալ խողովակի բոլոր ծակոտիկներից։ Իսկ յայտնի է որ գոլորշիի մեծ քանակութիւնը հանգցնում է կրակը։ Եթէ հրդեհը յանկարծակի է յայտնվում և շուտով սկսում է տարածվել Թատրոնի մէջ, այն ժամանակ բաց են անում կաթսայի բոլոր խողովակները, և Թատրոնի ամբողջ սրահը անմիջապէս լցվում է Թանձր գոլորշիով, որ և հանգցնում է կրակը։

Անհերքելի է որ այդ և սրանց նման տեխնիական նախազգուշացնող, կրակի դէմ պաշտպանող, կամ հրաշէջ միջոցները՝ անհրաժեշտ են, քանի որ միմիայն ամբոխի սառնասրտութեան, խոհեմութեան և ոգու ներկայութեան վրա վտանգի ժամանակ ոչ մի երկրում յոյս դնել չէ կարելի։ Ապացուցված է որ Թատրոնների հրդեհների ժամանակ հանդիսականների մէջ յայտնվում է այնպիսի մի անզուսպ երկիւղ, պանիկա, որ մեծ մասամբ մարդիկ կործանվում են Թատրոնների հրդեհների ժամանակ ոչ Թէ այրվելուց, այլ միմեանց փոխադարձապէս խեղդելուց։ Լինում է այդ տեսակ դէպքերում այնպիսի մի սարսափելի, աննկարագրելի իրարանցում, որ մարդիկ իրանց կեանքը վտանգից ազատելու համար կատարելապէս գլուխ են կորցնում, կատարելապէս գազաններ են դառնում.... միմեանց խփում, հրում, խեղդում են, մէկը միւսի վրայից է անցնում, միմեանց ոտներով տրորում, միմեանց սպանում են անգամ.... Այդտեղ տղամարդը արդէն ուշադրութիւն չէ դարձնում Թոյլ սեռի, կանանց, կամ անօգնական մանուկների վրա... նա դառնում է գազան, մտածելով միմիայն իր անձնական փրկութեան մասին։ Փարիզի „Opera Comique“ Թատրոնի վերջին հրդեհի ժամանակ պատահել է որ տղամարդիկ յետ էին մղում իրանց սիրելի ամուսիններին և երեխաներին, նրանց վրայից էին անցնում, նրանց խեղդում էին, դանակ էին հրում նրանց կուրծքի և կոկորդի մէջ,—միայն Թէ իրանց համար ճանապարհ բաց անէին, իրանք ազատվէին բոցերից.... Այդ է պատճառը որ Թատրոնների հրդեհների ժամանակ մեծ մասամբ այրվում են կանայք, որովհետև նրանք աւելի Թոյլ են, իսկ տղամարդիկ նրանց անխնամ Թողնելով վիճակի կամքին և զոհելով նրանց կրակի լափող բոցերին, իրանք փրկվում, ազատվում են ամեն տեսակ միջոցներով։ Վտանգի ժամանակ կինը Թուլանում, վըստահութիւնը կորցնում է, իսկ տղամարդը՝ էգոիստ, եսական և անզուսպ գազան է դառնում։

Դա է մեծամասնութեան յատկանիշը։ Վտանգի ժամանակ մարդկային զգացմունքը պահպանողները, ընդհանրութեան վրա հոգացողները բացառութիւն են կազմում,—և այդ տեսակներին, որոնք հասարակ գազանների մէջ դովելի բացառութիւն են կազմում, որոնք իրանց պարտաւորութիւնն են կատարում, մենք սովորութիւն ունենք հերոսներ անուանել....

Այդ է պատճառը որ այնպիսի սարսափելի աղէտների ժամանակ, ինչպէս են Թատրոնական հրդեհները, պէտք է որքան հնար է ուշք դարձնել տեխնիական փրկիչ միջոցների վրա, քանի որ իրան մարդկային հասարակութեան, ամբոխի սառնասրտութեան, խոհեմութեան, մարդասէր և մարդասէր վարմունքի վրա դէպի իր նըմանները, դէպի ընդհանրութիւնը՝ յոյս դնել անհնարին է։

Ամենաքաղաքակիրթ անհատը աղէտի ժամանակ, երբ իր կեանքը վտանգի մէջ է,—լինի դա հրդեհ, ալեկոծութիւն, կամ երկրաշարժ,—իր գոյութեան համար կռուի մէջ կորցնում է մեծ մասամբ իր բոլոր մարդկային համակրելի, եղբայրսիրական, մարդասէր, հասարակական և ընկերական յատկութիւնները,—և դառնում է եսական, դառնում է կատարեալ վայրենի, դառնում է անզուսպ գազան։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԽԱԼՑԽԱՅԻ ԴԱՒԱՌԻ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ

—

*Ախալցխայի դաւառը իր աշխարհագրական դիրքով բաժանվում է մի քանի մասերի,—լեռնային, անտառային, դաշտային և ձորային։ Լեռնային և տարահարթ մասի բնակիչները պարապում են անասնապահութեամբ. նրանք են մատակարարում քաղաքիս խուզը, պանիրը, բուրթը և մսամորթ անասունը. այդ մասերում բնակում են գլխաւորաբար Թարաքամներ և քրդեր։ Քաղաքիս բաւականութիւն տալէն զկնի նրանց գովական կարագը արտահանվում է Թիֆլիս և Քութայիս. այդ կողմերի բնակիչներից ինչպէս հարուստին նախանձելի կարելի է համարել իր հարստութեամբ, նոյնպէս և աղքատին կարեկցութեան արժանի չարքաշութեամբ։ Հարուստներից ոմանք պարապում են և չօտարութեամբ—անասնավաճառութեամբ. նրանք գաղթողներ չեն, ինչպէս Բորչալուի Թուրքերը, սակայն նրանք էլ ունեն ձմեռանոցներ և ամառանոցներ։ Անտառային բաժնի բնակիչները մատակարարում են շինութեան փայտերէն նիւթերը և վառելիք (փայտ և ածուխ). այդ մասի բնակիչները առողջակազմ են ինչպէս լեռնցիները և հարուստ. նրանք կարող են իրանց երկրագործութեան արդիւնքից մի մաս էլ վաճառել քաղաքումս, ինչպէս և ցորեն, գարի և այլ ընդեղէն, որպիսիք սերմանում են անտառի բաց տեղերում և ստորոտներում։ Կան և մի քանի գիւղեր, որոնք ունեն իրանց առանձնայատուկ պարապմունքները։ Սաղէլ, մեծ և փոքր Պամաճ, Ծուղրութ գիւղերում տարածված է մեղուապահութիւնը, մանաւանդ Պամաճի մեղրը, որ գերազանցում է իր լաւ յատկութիւններով ամբողջ գաւառի մեղրից. Ծուղրութում կայ և քարահանք, որտեղից մատակարարում են քաղաքիս շինութիւններին տաշված Թէ անտաշ կարծր քարեր և այդպիսի, ազատ միջոցի պարապմունքը մի առանձին աղբիւր է նիւթական ապահովութեան ծուղրութցիների համար. գոված է Սաղէլի և Պամաճի շողգամը։ Ծղասպիլայ և Մոխրէք գիւղերի մէջ տեղ է ալեքատորի հանքը, որ մեծ պահանջ է զգացվում Թէ Ախալցխայում, Աբասթումանում, Բօրժոմում և այլ տեղեր, և գործածվում գաճի փոխարէն, միայն ալեքատորը իր բընական յատկութեամբ ձիւնի սպիտակութիւն ունի և կոկածը փայլում է ինչպէս լակ։ Դաշտային մասը շատ փոքր տարածութիւն է կազմում. հացի կողմից Ախալցխան անենչան տոկոս է տալիս. մեր գաւառի հացը բաւականութիւն չէ կարող տալ քաղաքիս, այլ բերվում է Շիրակից և Ջաւախէթից. այդ պատճառով էլ առանց երկրորդական պարապմունքի նոյն իսկ գիւղացիք չեն կարող բաւականութիւն տալ իրանց կենսական պահանջներին. երկրորդական պարապմունքը պարտիզպանութիւն և անդաստանապահութիւն են։ Պարտէզների կողմից գերազանցում են Կօպլիանի գիւղերը, այնտեղի մրգերը թէ առատութեամբ և թէ յատկութեամբ մրցում են միւս գիւղերի պարտէզների հետ. մանաւանդ գովական է Ուղէլի և Ադիկօնի շահալմայ խնձորը և լանջիր տանձը։ Սաղէլ, Ապ, և Դրէլ գիւղերը պատրաստում են տարեկան մօտ 5,000 ցախաւել, որ արտահանում են Ախալքալաք և Ալէքսանդրապօլ։ Անդաստանապահութիւնը զարգացած է ձորային մասերում. կարտօֆիլի, կաղամբի և ճակնդեղի մի քանի տեսակները մեծ քանակութեամբ արտահանվում են հեռաւոր երկիրներ. ամենից աւելի գոված է Սուգլիսի վարունգը, կարտօֆիլը, ստեպղինը և ճակնդեղը, իսկ Վալայի դդումը և կաղամբը։ Մի քանի տափարակ տեղերում վերջին տարիներս փորձեցին ծխախոտի մշակութիւնը. այդ ճիւղը այժմ տարածվում է աստիճանաբար. մեծ մասամբ տարածված է Ասպինձայի շինական հասարակութեան սահմաններում, և ամենից գովական ծխախոտը արտադրում են մեծ և փոքր Օշօրայ, Ասպինձայ և Տօլօշ գիւղերը։ Լեռնային մասում մի փոքր քանակութեամբ հաւաքվում է և լուսածաղիկ, զըխաւորապէս Լեպիսի և Ուրավէլի սահմաններում։ Թէպէտ մեր կողմի լուսածաղիկը գեղեցիկ և խոշոր է, սակայն աղնութեան կողմից գերազանցում է Փոցխովինը, որտեղի լուսածաղիկ հաւաքելու իրաւունքը տրվում է կապալով Դիկվիրում. այդ կապալը միշտ ձեռք են բերում ախալցխացիները և հաւաքելով վաճառում կամ Թիֆլիսում Ռիչար եղբայրներին և կամ Ալէքսանդրապօլի վաճառականներին, որոնք արտահանում են Մարսէյլ խառնելով ստոր տեսակի լուսածաղիկի հետ. իմ ասածը զրպարտութիւն չէ, լսել եմ նոյն իսկ վաճառականներից և ենթադրելով տեղական գինը Մարսէյլի գնի հետ։ Համեմատելով մեր գիւղացիների տնտեսական վիճակը քաղաքացիների հետ, վերջինիս ստոր եմ գտնում, ի նկատի ունենալով, որ գիւղերում աւելի շատ հարուստներ կան քան քաղաքում։ Գիւղացին ունի իր աշխատութեան վարձը, հալալ քրտինքի արդիւնքը վայելելու միջոցներ, իսկ քաղաքացին զրկված է դոցանից. նախ, որ քաղաքացին իր առևտուրի և արհեստների վրա է յոյս դնում, որ քիչ է վարձատրվում, իսկ գիւղացու յոյսը բնութեան վրա է և չէ խնայում իր քրտինքը, որովհետև լիայոյս է, որ իր քրտինքը վարձատրվում է բնութիւնից առատապէս։ Բայց, մի՞թէ քաղաքացին էլ չէ կարող ձեռնարկել երկրորդական պարապմունքներ.... ինչպէս չէ. բայց այս մասին իմ նկատողութիւնը յետաձգում եմ մի այլ անգամ։

Ա. Ա.

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

—

Յունիսի 15-ին

Միշտ աչքի ընկնող և աղմկալից ժողովները լինում են իրաւասուների ընտրութեան միջոցին, որովհետև նրանցից է կախված քաղաքի նիւթական և առողջապահական բարեկեցութիւնը. որովհետև այդ ընտրութեան հետևանքից է կախված մի քանի անձինքների ապրուստի միջոցը. որովհետև քաղաքային ինքնավարութեան բարեկամութիւնը կամ հակառակութիւնը կարող է շահաւէտ և վնասակար ազդեցութիւն ունենալ մի խումբ կողմնակի յարաբերութիւններ ունեցողների համար,—ինչպէս են զանազան կապալառուները, կալուածատէրերը, ծառայողները և այլն։ Այս հզօրագոյն պալատենիում սահմանված են օրէնքներ ընարողական իրաւունքների և ձեների մասին, սակայն մի կողմից էլ, հասարակութեան ստուար մեծամասնութիւնը իր ձայնը և բողոքը չէ կարող բարձրացնել, չունենալով ընտրողական ցենզ։ Ընտրողների փոքրամասնութիւնը, որ հարուստ դասակարգն է, իր ցենզային իրաւունքով մեծամասնութիւնն է կազմում, I և II կարգի ընտրողական իրաւունքը իր ձեռը ունենալով. հետևաբար և իրաւասու ընտրվում է այն անձը, որը հարուստի կանդիդատն է. բայց դա օրէնք է, և ոչ ոք իրաւունք չունի շեղվել օրինական սկզբունքից։ Ընտրվեցան իրաւասուները. այժմ մի նոր շարժողութիւն է երևում նորընտիր իրաւասուների մէջ. ահա պարզում են դրօշակները կուսակցութիւնները և ամեն մէկը ջանք է անում իր կողմը շահել իրաւասուներին։ Ի հարկէ յաղթանակը տանում է այն կուսակցութիւնը, որը կրեսոսի գաւազանը ունի իր ձեռքում։ ուրեմն և առաջարկվում «Թոտորի մատաղը, Թոտորի որդոցը վայելելու»։ Հետևանքը որքան և տխուր լինի, սակայն չորս տարի դասապարտված լինելու ենք մեզ ընկճող հարուստ դասակարգի ցանկութիւններին ստրուկ լինելու։ Բացատրելու կարիք չը կայ, թէ իրաւասուն ինչպէս կարող է ստրուկ լինել, ով կարող է նրա ձայնը և իրաւունքը բռնաբարել. բայց մի և նոյն է, քանի որ հարցերը վճռվում են մեծամասնութեան ձայնով, փոքրամասնութեան հէնց խելացի առաջարկութիւնն էլ մնալու է անուշադիր. և այդպիսի փոքրամասնութիւնը կազմում է ազգայինների եռապաշտութեան խոչնդոտ, ընդդիմադիր, անաչառ և անկողմնապահ ստորին դասակարգի ընտրելին։

Ամեն տեղ երևան են գալիս տարաձայնութիւններ. մանաւանդ վերջին տարիներում, երբ մեր հայ հասարակութիւնից խզվել է համերաշխութեան կապը, ուստի և մեր ամեն ազգային հիմնարկութիւնները տուժում են մեր կրքերի արդասիքներին։ Ընտրվեցան ուսումնարանի հոգաբարձուներ միջին և ստորին դասակարգերի ցանկութեան համաձայն, բայց այդպիսի յաղթութիւնը էժան չէր նստելու յաղթանակողներին, եթէ ընտրութեան միջոցին չը յաջողվեցան հակառակորդները, գոնէ գործին վնասելու համար հնարաւոր էր խոչնդոտներ ստեղծել. հետևանքն այն եղաւ. որ ուսուցչական խմբի մէջ երկպառակութեան որոմներ սերմանեցին, ուսուցիչները ապստամբեցրին թէ միմեանց և թէ հոգաբարձութեան դէմ և այսօր մեր դպրոցների հարցաքննութիւնները ստոր էին կրիտիկայից։ Իսկ միւս կողմից եթէ հոգաբարձութիւնը անընդունակ էր ուսուցիչներ ընտրելում, մեր կոյր բաղդից ուսուցիչներն էլ «կացինը լաւ քարին խփեցին»։

Ս. Փրկիչ եկեղեցու երեսփոխանական պաշտօնը թափուր է այժմ պ. Խկիդիանեանի հրաժարվելով. շատերը այն կարծիքի են, որ հոգևոր կառավարութիւնը ծափ է զարնում այդ մասին, որովհետև ցանկանում է այդ իրաւունքն էլ իր ձեռքը ձգել։ Ցայտնի է, որ հասարակութեան և Փրկչի միաբանների մէջ տիրում է մի տեսակ սառնութիւն, և ինչպէս կարող են ցոյց տալ մեր տէր-հայրերը իրանց հակակրութիւնը, ահաւասիկ մի լաւ միջոց,—փոխանակ ժողովի մասին հրաւէրները տարածելու բոլոր ծխականների մէջ, նա (հոգևոր կառավարութիւնը) միմիայն մի քանի ընտրելիների անուններ ցուցակագրված թերթով, հրաւիրում է երեսփոխանական ընտրութեան ժողովի։ Ամսիս 7-ին հաւաքված էին 76 անձն. հայր բարեկարգիչը արժան չը համարեց բանալ նիստը. որովհետև օրինական 100 թիւը լրացած չէր. և երբ ժողովրդից բողոքներ յայտնեցին թէ ինչու բոլոր եկեղեցիներում ծանուցում չէր տրված, ինչու ուստարաշիներին հրաւիրագրերթ չէր ուղարկված, ինչպէս այդ ձևը ընդունված էր միշտ, և թէ ինչու համար փոխանակ ընդհանուր հրաւիրագրերթի ծաղկաքաղ անելով հրաւիրում են միմիայն ցուցակագրված անձինքներին,—հայր նախագահը արդարացրեց իրան թէ ս. Փրկիչ եկեղեցում ծանուցում արված էր, թող եկեղեցի գայլն և լսէին։ Արձանագրութիւնից յայտնվեցաւ, որ երրորդ անգամ էին հրաւիրվում և ժողովրդի օրինական թիւը չը հաւաքվելով ընտրութիւնը յետաձգվում է (գուցէ յաւիտեան)։ Միթէ սա էլ բռնաբարութիւն չէ ժողովրդի իրաւունքին։ Ցանկալի էր, որ այս կէտը հոգևոր բարձրագոյն իշխանութիւնը ի նկատի ունենալով տնօրինէր ըստ արժանւոյն։ Մեր ազգային և հոգևոր գործերը յետաձգիմում են քաղաքում արժանաւոր յաջորդ չը լինելուն համար։ Երկու տարի առանց յաջորդի մնալը, այդ բաւական պատիժ էր մեզ համար. ժողովրդի բարեկամը, նրա ազգային և հոգևոր գործերին ծանօթ անձը խոստովանում է, որ այդպիսի դրվանքը բարոյական մահ է. վաղ թէ ուշ ազգն աւելի տխուր գոյներով է ներկայանում հետևանքը։ Մինչդեռ անտէրութիւնը թագաւորում է մեր մէջ, մինչդեռ մեր իսկական կրքերը գերակշռում էին մեզ, մինչդեռ մեր հասարակական և ազգային գործերում անձնանուէր առաջնորդներ չունինք, մեր բարոյական պարտքն էլ կատարելու սկզբունքից շեղվում ենք։ Երկու տարի է, որ աղքատների հոգաբարձութիւն չունենք. Բարեգործական ընկերութիւնը ենթում է. հոգևոր կառավարութիւնը սրբոյ է դարձում, իսկ հասարակութիւնը ակնկալում է որ թեմական սրբազան առաջնորդը իր խոստմունքի համաձայն չուտով անօրինելու է այդ մասին. երկու տարի եմ ասում։ Երևակայեցէք, ոբպիսի կրիտիկական դրութեան մէջ կը լինի մեր ազգատների հալը։ Ազգատի խղճահար վիճակը որքան և յուզէ առաքինի սրտեր, սակայն առանց օրինաւոր հոգաբարձութեան անհնար է ազգատին նպաստել մանաւոր կերպով, ինչպէս կատարվում էր 40 տարիից աւելի։

Իրաւասու

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կրկնում ենք, որ ԹԻՖԼԻՍԻ մեր այն բաժանորդները, որոնց մեր ցրուողները չեն հասցրել «Մշակի» 64-որդ և 65-որդ համարները, թող բարեհաճեն դիմել մեր խմբագրութեանը, որպէս զի ստանան պակասորդ համարները։

—

ՇՈՒԱՎԷՐԻՑ մեզ գրում են։ «Մեր ժողովուրդը շատ անդարգացած է բարոյապէս և մասաւորապէս, նա ոչինչ հասկացողութիւն չունի կրօնի էութեան մասին։ Հարկաւոր կը լինէր մեզ համար լուսաւորված և եռանդոտ հոգևորականներ, որոնք անընդհատ քարոզներով հասկացնէին մեր գիւղացիներին կրօնի էութիւնը, եկեղեցական խորհրդի և արարողութիւնների նշանակութիւնը։»

—

Լսում ենք որ «Новое Обозрѣніе» տեղական ռուսաց լրագրի խմբագրութիւնը անցնում է ուրիշների ձեռքը։ Ասում են որ պ. Նիկոլաէվ, մի քանի տարի առաջ հրատարակվող «Обзоръ» լրագրի նախկին խմբագիրը, մասնակցելու է այժմ վերոյիշեալ ռուսաց լրագրի խմբագրութեան։

—

ԴԸԶԼ-ԱՐՎԱՏԻՑ մեզ հաղորդում են, որ յունիսի 7-ին այդ քաղաքում հանդիսաւոր կերպով հիմք դրվեցաւ քաղաքային ուսումնարանի շինութեանը, ներկայութեամբ բարձրատիճան անձանց։ Ռուս քահանան օրհնեց դպրոցի հիմնարկութիւնը և մի կարճ, բայց ազդու ճառ ասեց այդ առիթով։ Ուսումնարանի շինութիւնը, որ բաղկացած կը լինի երկու սենեակից, յանձն է առնում իր ծախսով կառուցանելու պ. Բաղդասեան։ Ուսումնարանը քարաշէն կը լինի։

—

Դարձեալ խնդրում ենք մեր բաժանորդներին, որ ուղարկեն մեզ իրանց վրա մնացած ապառիկները թէ անցեալ և թէ ներկայ տարվայ։ Կարելի է միթէ հրատարակել լրագիր, երբ բաժանորդների մի մասը տարուց տարի ապառիկ են թողնում իրանց բաժանորդավճարը։ Եթէ մենք ստանայինք այն բոլոր փողերը որ 15 տարվայ ընթացքում «Մշակի» բաժանորդները մեզ պարտ են մնացել տարուց տարի, բաւական պատկառելի գումար կը կազմվէր 15 տարվայ այդ ապառիկներից։ Բայց մենք, ի հարկէ, չենք էլ պահանջում բոլոր 15 տարվայ ընթացքում դիզված ապառիկները, այլ միայն այն բաժանորդագները, որոնք մեզ վճարած չեն եղել անցեալ 1886 և ներկայ 1887 թվին։ Եւ յետոյ գտնվում են միամիտ կամ կեղծաւոր հայեր, որոնք դիմում են մեզ հարցնելով՝ «ինչի ձեր լրագիրը ամենօրեայ չէր դարձնում....»։ Եւ կարծես ճշմարիտ ահագին դումար լինի,—տարեկան 10 ռուբլի։

—

Ցունիսի 17-ին, կովկասեան կառավարչապետի օգնական գեներալ Շերեմետեվ, շտաբի գլխաւոր Տրօցկից, կառավարչապետի դիւանապետ կառավարիչ գեներալ Շեպելեվ և Թիֆլիսի նահանգապետ Զիսերման, Բաթում գնացին պատերազմական մինիստր Վանովսկուն հանդիպելու համար։

—

Մոսկվայի Ս. Մորոզով յայտնի ֆիրման մտադիր է Անդրկովկասում ամերիկական բամբակի մշակութեան մեծ փորձեր անելու, և յոյս ունի, որ այդ կը յաջողվի այն հիման վրա, որ Անդրկովկասի կլիմայական պայմանները շատ նպաստաւոր են ամերիկական սերմի մշակութեան համար։

—

Ինչպէս արդէն հեռագիրը լուր բերեց, ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը հարկաւոր է համարել փակել արական գիմնազիաների և պրոգիմնազիաների պատրաստական դասարանները։ Այդ հարցի վերաբերութեամբ «Правит. Вѣстн.»-ի Վերջին համարներից մէկում կարդում ենք հետևեալը. «Ամեն տարի ժողովրդական մինիստրութիւնը ստանում էր ուսումնարանական շրջանի հոգաբարձուներից տեղեկութիւն այն մասին, որ գիմնազիաների և պրոգիմնազիաների առաջին և միւս ստորին դասարաններում անկարելի է ընդունել մանաւոր կերպով նոյն իսկ շատ լաւ պատրաստված աշակերտներին, քանի որ տեղ չէ լինում, որովհետև բոլոր տեղերը բռնում են պատրաստականներից փոխվող աշակերտները։ Այդպիսով աւելի լաւ պատրաստված երեխաները շատ անգամ զրկվում էին գիմնազիա կամ պրոգիմնազիա մտնելուց։ Այդ բանը չէր կարող վատ ներգործութիւն չունենալ միւս դասարանների ուսման ընթացքի վրա, քանի որ պատրաստականներից փոխվող աշակերտների մէջ լինում են և միջակները և թոյլերը։ Այդ հիման վրա մինիստրութիւնը վերոյիշեալ կարգադրութիւնը արեց, կարգադրելով մի և նոյն ժամանակ որ 1887/88 ուսումնական տարվայ սկզբից արական գիմնազիաների և պրոգիմնազիաների պատրաստական դասարաններում ընդունելութիւն չը լինի»։

—

Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը իր յունիսի 17-ի նիստում դպրոցի տեսուչ ընտրեց Սարգիս քահանայ Բէգնազարեանցին։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են հետևեալը։ «Մատդրութիւն կայ այստեղի հայոց հասարակութեան մէջ եկող 1888 թվին, եթէ նիւթական միջոցները ներեն, մի հայոց օրիորդական ծխական ուսումնարան բանալու. Ղուբայում։»

—

Մի երիտասարդ խնդրում է մեզ տպել հետևեալը։ «Մի ուսուցիչ ցանկանում է հայոց լեզուի դասեր ունենալ ծիսական-հոգևոր դպրոցներից մինում։ Ունի վկայագիր։ Հասցէի և պայմանների մասին կարելի է դիմել «Մշակի» խմբագրատանը։»

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են։ «Յունիսի 14-ին տեղի ունեցաւ այստեղի երկսեռ դպրոցների ակտը։ Ուսումնական մասի հաշուի ընթերցումից երևեցաւ, որ երկսեռ դպրոցներում 1886/87 ուսումնական տարում եղել են 167 հոգի աշակերտներ, որոնցից 96 տղայոց դպրոցում, իսկ 71 օրիորդաց։ Ուսումնական մասի հաշուից յետոյ կարդացվեցաւ նիւթական մասի հաշիւը, որից երևեցաւ որ երկսեռ դպրոցները յիշեալ ժամանակամիջոցում մուտք ունեցել են 4551 ռուբլի, և 6 կոպէկ, իսկ ծախք՝ 3546 ռուբլի, 24 կոպէկ։ Վերոյիշեալ եկամուտի մէջ չեն մացրած 1886 թ.-ի՝ եկեղեցիների դրամագլխների տոկոսները, արդիւնքների կէսը և զանձանակադրամը, որոնք ուսումնարանին են յատկացրած։ Ինչպէս յայտնվեցաւ՝ հոգաբարձութիւնը այդ մասին մի քանի անգամ դիմել է եկեղեցիների դանձապահ-երեցփոխանոներին և հաշիւ է պահանջել, բայց նրանք ոչ միայն հաշիւ չեն տուել, այլ և ապառնացել են ոչինչ չը տալ։ Կարծում ենք, որ ժամանակ է այդպիսի անորոշ յարաբերութիւնը վերջ տալ և ուսումնարանի դրամական գործերը որոշ վիճակի մէջ դնել. հաշիւների ընթերցումից յետոյ, տեղի ունեցաւ աշակերտուհիների ձեռագործի հանդէս բերելը. շատերը ներկայ եղողներից գնեցին դրանցից, և այդպիսով մօտ 90 ռուբլու ձեռագործ վաճառվեցաւ։ Այս տարի դպրոցը ձեռագործից եկամուտի չահ է ունեցել՝ շնորհիւ վարժուհի Ռամիկեանի, մինչդեռ միւս տարիներում ձեռագործի համար գնված նիւթերը մնաս էին բերում ուսումնարանին»։

—

«Кавказъ» լրագիրը հաղորդում է, որ Սօլոլակ սարի զառիվայրի վրա անցնող, դէպի ԿՕջՐ տանող ճանապարհը, որ վաղուց է արդէն կատարելապէս փչացրած էր, այժմ սկսել են նորոգել, ՎՕղնեսէնսկի փողոցի վրա գտնվող եկեղեցուց ըսկսած։ Ճանապարհի տիները պնդացվում են սալաքարերով։

—

Տեղական ռուս լրագիրները հաղորդում են որ ձեռնամուխ է եղած նախկին Արծրունու թատրոնի հիմնովին վերաշինութեանը։ Թատրոնը երկու յարկ լօժաներ կունենայ։

—

ԹԻՖԼԻՍԻ շաբերը արդէն սկսվել են։ Շատերը Թիֆլիսի բնակիչներից ցրվում են արդէն այլ և ամարանոցները։

—

«Արձագանք» շաբաթաթերթի Կ. Պոլսի նամակում կարդում ենք հետևեալը։ «Տիկին Գայանէ Մատակեան, որ ձրիաբար կը վարէ արհեստանոցի տեսչութիւնը, մտադիր է առաջիկայ սեպտեմբերին մանկական պարտէզ բանալ համբաւաւոր գրագէտ և ուսուցիչ Թոմաս Թէրզեանի (հայ-կաթոլիկ) ընկերակցութեամբ, ուր անխտիր պիտի ընդունվին հայ-լուսաւորչական և հայ-կաթոլիկ մանուկներ։»

—

Մեզ իմացրում են տալ հետևեալ նկատողութիւնը. «Թիֆլիսի բաղանիքներում գտնվող պաշտօններ կատարող երիտասարդների մեծ մասը Նոր-Բայազէտի կողմերից են։ Անկասկած ամենքին յայտնի է, թէ ինչ նեղ դրութեան մէջ են գտնվում այդ երիտասարդ ծառաները, որոնք բնակվում են ամբողջ տարիներով բաղանիքի խոնաւ և գարշահոտութեամբ լցված խուցերում, ենթարկվելով գտնազան տեսակ հիւանդութիւններ։ Բայց այդ բոլորը երկրորդական նշանակութիւն է ստանում, համեմատելով այն դրամական ճնշումների հետ, որոնց ենթարկվում են այդ ծառայողները զանազան բաղանիքների կապալառուների կողմից։ Վերջին ժամանակները շատ բաղանիքների կապալառուներ հարկ են նշանակել ծառայողների վրա, ամսական 4 ր. 10 կոպէկ։ Այդպիսի մի անիրաւացի և անհասկանալի կամայական հարկ նշանակելու սովորութիւնը գործադրվում է չորս թէ հինգ բաղանիքներում։ Բացի դրանից կապալառուները «քիսայ քսողներից» սկզբից առնում են մի յայտնի գումար, և ապա միայն յանձնում են նոցա այդ պաշտօնը։ Թէ ինչ հիման վրա են անում այդ բոլորը, յայտնի չէ. յայտնի է միայն, որ ծառայողները իրանց տեղերից չը զրկվելու համար, ստիպված են կատարել կապալառուների ամեն տեսակ ցանկութիւնները, որի պատճառով և իրանց աշխատանքը և կրած նեղութիւնները բոլորովին չեն վարձատրվում։ Եւ առհասարակ ցանկալի է, որ մի փոքր աւելի ուշադրութիւն դարձնվէր Թիֆլիսի զանազան անկիւններում այդպիսի գործերով զբաղվող հաղարաւոր եկոր երիտասարդների վատ դրութեան վրա»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՕՐԻՆԱԳԾԵՐԸ

—

Գեներալ Բուլանժէ հեռացաւ քաղաքական, մինիստրական ասպարիզից, բայց նրա պատերազմական և զինուորական օրինագծերը դեռ շարունակում են զբաղեցնել թէ Ֆրանսիայի կառավարութեանը և թէ ֆրանսիական պարլամենտին։ Յունիսի 4-ից պատգամաւորների ժողովը սկսեց քննութեան ենթարկել այդ օրինագծերը։ Գեներալ Բուլանժէի հեռանալուց յետոյ՝ ցանկութիւն կար յետաձգելու այդ օրինագծերի քննութիւնը, կամ ուրիշ խօսքով մի առ ժամանակ մոռացութեան տալու դրանց,—սակայն պատգամաւորների ժողովի մեծամասնութիւնը պնդեց, որ պէտք է վերջապէս ֆրանսիական զինուորական օրէնքները ամբողջացնել, կազմակերպել, և այնպիսի զբ-

բութեան մէջ դնել երկրի զինուորական ոյժերը, որպէս զի երկրի չահերը ապահովութեան մէջ կարողանան համարվել: Բուլանժէի օրինագիծը, որի հիմնական կէտերի հետ համաձայն է և այժմեան պատերազմական մինիստր Ֆէրրոն, արդէն երկար ամիսներ է, որ քննվում է մի առանձին յանձնաժողովի մէջ, բայց յանձնաժողովը անկարող եղաւ վերջնական եզրակացութիւն դուրս բերել, քանի որ այն հիմնական փոփոխութիւնները, որ արել է Բուլանժէ, բաւականին ծանր պատասխանատուութիւն և դժուարութիւններ են առաջ բերում: Վերջապէս օրինագիծը փոքր ի չատէ մշակված ձևով ներկայացվեցաւ պարլամենտի քննութեանը, որը և այժմ էլ շարունակվում է: Օրինագծի գլխաւոր կէտերը հետևեալներն են. զինուորական ծառայութիւնը ընդհանուր անձնական պարտաւորութիւն է. իսկական ծառայութեան ժամանակամիջոցը երեք տարի է. միմիայն կամաւորները արձակվում են, ընտանեկան դրութեան վերաբերեալ հանգամանքներով զինուորական ծառայութիւնից ազատվել չէ կարելի. զինուորակոչութեան ժամանակ յետաձգումներ կարելի է ստանալ միմիայն ուսումը աւարտելու համար. գաղթական երկիրների մէջ ծառայող զօրքերին տրվում են արտօնութիւններ: Նոր օրինագիծը մի անգին տարբերութիւն ունի հինից, և այդ այն է, որ այժմ իսկական ծառայութեան ժամանակամիջոցը ոչ թի հինգ, այլ երեք տարի է, այդպիսով զինուորական ծառայութիւն կատարելը ազգաբնակութեան համար բաւականին հեշտութիւն է ներկայացնում նոր օրինագծի համեմատ: Ուշադրութեան արժանի կէտերից է և այն, որ իւրաքանչիւր տարի զէնքի են կանչվում յայտնի հասակ ունեցող բոլոր անձինք: Ֆրանսիայում միջին թիւով իւրաքանչիւր տարի քսան տարեկան հասակին են հասնում 300,000 մարդիկ, որոնք պէտք է զօրքի մէջ մտցվեն, ի հարկէ շատ քիչ բացառութեամբ, և այդ բացառութիւն կազմողները կը լինեն ծառայութեան անկարող մարդիկ միայն: Պատերազմական մինիստրը իրաւունք ունի ժամանակից առաջ արձակել զինուորներին ծառայութիւնից, որով օրինագիծ կազմողները ցանկացել են պետութիւնը ազատել զանազան ծախքերից, երբ մեծ զօրքի կարօտութիւն չի լինի, և կարելի կը լինի զօրքի մի մասը արձակել: Թէ որքան կը յաջողվի այդ, —չէ կարելի այժմ որոշ ասել, միայն պարզ երևում է, որ օրինագիծը ամեն մէջից ի նկատի է ունեցել, որպէս զի հարկաւոր ժամանակը կարելի լինի մեծ զօրք ունենալ հայրենիքի պէտքերի համար, արձակելով զօրքի մի մասը այդ դէպքերում, երբ մեծ զօրք պահելու կարիքը չի զգացվի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բելգիական «Nord» լրագիրը, որ ինչպէս յայտնի է, ռուսաց մինիստրական օրգանն է, ասում է որ սուլթանը մենակ չէ կարող վաւերացնել անգլո-թիւրք դաշնագիրը, այլ անչուշտ դաշնագիրը պէտք կունենայ եւրոպական մեծ պետութիւնների վաւերացման: Երբ բոլոր կը գայ դաշնագիրը վաւերացնելու, Ռուսաստանն էլ անշուշտ կիմանայ իր ձայնը լսելի անելու:

—Այս օրերս Փարիզ էր եկած Յունաստանի թագաւորը: Արտաքին գործերի մինիստր պ. Ֆըլուրանս այցելութիւն արաւ թագաւորին, որը մի և նոյն օրը փոխարինաբար այցելեց արտաքին գործերի մինիստրին:

—Յոնկինի մէջ խօլերան սաստկացած լինելով, Փարիզից բժիշկներ են ուղարկվել Յոնկինի ֆրանսիական զօրքերի համար:

—«Times» լրագիրը հաղորդում է, որ Վիկտորիա թագուհու յօբելեանին ներկայ գտնվելու համար եկած է Լօնդոն և Եգիպտոսի մինիստր, հայազգի Նուբար-փաշա, որին բացի զրանից յանձնարարված է խորհրդակցել անգլիական կառավարութեան հետ եգիպտական խնդրի առիթով:

—Լէյպցիգում ամփոփվող էլդաս-լօտարինգցիների դատի մասին աւստրիական մի քանի լրագիրներ գրում են. «Իրաւաբանական տեսակէտից, այդ մեղադրանքները ոչինչ հիմք չունեն. բոլոր քննութիւնները ոչ մի այնպիսի փաստ չեն դտել, որով յերաւի կարելի լինէր նոցա մեղադրել պետական դաւաճանութեան մէջ: Այդպիսով էլդաս-լօթարինգցիները դատապարտվում են նորա համար, որ իրանց սրտի մէջ չեն համակրում Գերմանիային, և սիրում են Ֆրանսիային. այդպիսով գերմանական դատարաններն էլ կոյր գործիք դառնալով կառավարութեան ձեռքին, ուզում են այդպիսի միջոցներով սարսափեցնել էլդաս-լօթարինգցիներին»:

—Բոլգարական մի քանի լրագիրներում տպված է հետևեալ նամակը, որը, ինչպէս հաղորդում են նոյն լրագիրները, Սոֆիլով գրել է Վիեննայից մինիստր Նաչեվիչին. «Յարգելի պարոն նախագահ. ես հեռագրով դիմեցի Իշխան Ալէքսանդրին. իմ բոլոր խնդիրքները, որ նա վերադառնայ Բոլգարիա, ապարդիւն մնացին: Այսօր ես խօսեցի կոմս Կալնոկիի հետ. նա խորհուրդ է տալիս հաշտութիւն կայացնել Ռուսաստանի հետ: Այստեղ, Վիեննայում, շատ սատանվող դրութիւն է նկատվում: Սաստիկ հիւսիսային քամի է փչում»:

—Անգլիական համայնքների ժողովի մշակած խիստ օրէնքները Իրլանդիայի վերաբերութեամբ արդէն այժմեանից առաջ են բերել այնտեղ կատարեալ ընդդիմադրութիւն: Կապալով վերցրած հողերից գիւղացիներին արտաքսելու փորձերը հանդիպում են կատաղի խառնակութիւնների. ամեն անգամ, երբ այդպիսի փորձ է լինում, միշտ վերջում ստիպված են լինում զօրք կանչել:

—Լօնդոնից հեռագրում են, որ բոլգարական խնամակալութիւնը ուզում է հրաժարական տալ:

—Կ. Պոլսում լուրեր են տարածվել, որ Բոլգարիայից մարդիկ են գնացել Իշխան Ալէքսանդրի հետ տեսնվելու և բանակցելու համար:

—Նորերումս Նիւ-Եօրկ է գնացել անգլիական պարլամենտի անդամ Օ՝Բրայեան, որը յայտնի է և իբրև իրլանդական հարցի ջերմ պաշտպան: Նիւ-Եօրկում նրան վերին աստիճանի հոխակրական ցոյցեր արեցին:

—Սոֆիայից մամուռ կերպով հեռագրում են Բերլին, որ ազգային ժողովը մտադիր է անպատճառ մի իշխան ընտրել:

—Լօնդոնի լրագիրներին հեռագրում են, որ վճռված է Էրզրումը խիստ ամրացնել:

—Բէլգրադից հեռագրում են, որ այնտեղ յոյս ունեն, որ բարեկամական յարաբերութիւններ կը հաստատվեն Բոլգարիայի և Սերբիայի մէջ:

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ստատիստիական տեղեկութիւններից երևում է, որ Ամերիկայում և Եւրոպայում վերջին տարիներում անձնասպանութեան դէպքերը հետզհետէ շատանում են: Օրինակ Ամերիկայի Միացեալ-Նահանգներում վերջին հինգ տարվայ ընթացքում անձնասպանութեան 8,226 դէպք է եղել: Նկատված է որ ամենից շատ անձնասպանութիւն լինում է ամառը, իսկ ամենից քիչ ձմեռը:

* * *

Այս օրերս մեզ աջողվեցաւ կարդալ կովկասեան գաւառական մի քաղաքից ուղարկված նամակի ծրարի վրա հետևեալ դուարձալի հասցէն, որ և արտագրում ենք այստեղ ամբողջութեամբ, պահպանելով բնագրի ուղղագրական սիալները: Тифлисъ, по грибоѣдовская илицѣ, на углу второго квартала отъ Чевчевозовской, идя по направленіе къ Дворцу, угловой одноэтажній Домъ, гдѣ живетъ портниха безъ вывѣски, прошу покорно разискать, № дома потерянъ, Домъ угловой, на правой рукѣ.

* * *

Ունգարիայի մէջ նորերումս սարսափելի աղէտ պատահեց: Բազմաթիւ ուխտաւորներ Պակսից գնում էին Կալօչավ: Հասնելով Դունայն, ուխտաւորները, նստեցին նաւակը, որ անցնեն գետի միւս կողմը. բայց դեռ գետի մէջ տեղումն էին, յանկարծ սարսափելի փոթորիկ բարձրացաւ. նաւակը սկսեց օրօրվել ջրի երեսին: Նաւի վրա եղողները սարսափի մէջ ընկան. փոթորիկը այնքան սաստկացաւ, որ նաւակը շուռ եկաւ, և ուխտաւորները ջուրը թափվեցան: Վերջին տեղեկութիւններից երևում է, որ 280 մարդուց միայն 50—60 հոգի ազատվեցան, միւսները խեղդամահ եղան:

* * *

Փարիզում այժմ խօսում են այնտեղ պատահած մի զարմանալի դէպքի վրա: Բուլոնի անտառում, նորերումս յափշտակեցին մի օրիորդի, կէսօրին, երբ նա այնտեղ զբօսնում էր իր ընկերուհու հետ: Յափշտակողները դիմակաւորված էին: Նա կրում էր օրիորդ դը-Կամիօս անունը, բայց իսկապէս կին է և եղել է սպանիացի գուքս Դա-լա-Տորրէի կինը, որից նորերումս բաժանվեցաւ՝ ահագին աղմուկների պատճառ տալով:

* * *

Օրերումս Օդեսայում կայացաւ «Վարդերի ցուցահանդէս»: Ցուցահանդիսին ներկայ էր ահագին բազմութիւն. հանդէս էր բերված ամենի քան 100 հազար վարդ: Ցուցահանդիսից մուտք եղաւ 2000 ռուբլի, որը յատկացրվեցաւ Այգեգործական դպրոցին: Աչքի էին ընկնում վարդերից պատրաստված հրաշալի կոմպոզիներ, բարձր և ուրիշ զարդարանքներ: Շատերը ստացան ոսկեայ և արծաթեայ մեդալ: Կարգադրողը Այգեգործութեան կայսերական ընկերութիւնն էր:

* * *

Իշխան Բիսմարկի մասին շարունակում են լոյս տեսնել զանազան զրքեր. չէ անցնում համարեա մի շաբաթ, որ լոյս չը տեսնէր մի գիրք, կամ մի բրոշիւր «երկաթէ կանցլերի» կեանքի, գործունէութեան կամ քաղաքականութեան մասին: Շուտով լոյս է տեսնելու Ֆրանսերէն լեզուով մի ահագին աշխատութիւն Բիսմարկի մասին, որը ամփոփում է Բիսմարկի 40 տարվայ կեանքի պատմութիւնը, սկսած 1847—1887 թուականը, հեղինակն է Էդուարդ Սիմոն. իսկ գրքի վերնագիրը՝ «Իշխան Բիսմարկ»:

* * *

Բերլինից ոչ հեռու, Վանզէ երկաթուղային կայարանում, այս օրերս մի ընդհարում պատահեց երկաթուղու երկու գնացքների մէջ: Մի քանի վագոններ փչրվեցան, որի ժամանակ ճայթվեց գազը պարունակող վագոնը և գնացքը կրակ ընկաւ: Թէ վագոնների փչրվելուց և թէ գնացքի կրակ ընկնելուց՝ ճանապարհորդներից երեք հոգի սպանվեցան, իսկ 30 հոգի ծանր կերպով վիրաւորվեցան:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յունիսի: Կառավարչական հաղորդութիւն: «Народная Воля» անունով դաղտնի ընկերութեան յանցաւոր գործունէութեան պատճառով, որը յայտնվեցաւ 1883 և 1884 թուերին մի շարք յանցանքներով, և որը բացվեցաւ միմիայն 1885 և 1886 թուերին կատարված քննութեամբ, ձերբակալված և Պետերբուրգի զինուորական-նահանդական դատարանին ենթարկված են 21 անձինք, որոնք մեղադրվում են վերոյիշեալ ընկերութեանը պատկանելու մէջ, որը իրան նպատակ էր դրել բռնի կերպով վայր գցել եղած պետական և հասարակական կազմակերպութիւնը: Հրաժարական տուած կոլէժսկի սեկրետար Լօպատին, 41 տարեկան, մասնակցութեամբ չտաբս-կապիտանի աղջկայ Սալօվայի, 26 տարեկան, և պաշտօնեայի որդու Սուխօմլինի, 25 տարեկան, կազմակերպեց մի առանձին խումբ որ կրում էր «կենտրոնական յեղափոխական կազմակերպութիւն» անունը և ղեկավարում էր յանցաւոր ընկերութեան գործունէութիւնը, որը իր ձերբակալութիւնից յետոյ անցաւ Պետերբուրգի համալսարանի կանդիդատ Եակուբովիչի (25 տարեկան) ձեռքը: Բացի մասնակցութիւնից ընդհանուր յեղափոխական ընկերութեան գործունէութեան մէջ, մեղադրվածներից մի քանիսները գործեցին և մի քանի մասնաւոր յանցանքներ, ի միջի այլոց քահանայի որդի Ստարոդվորսկի (22 տարեկան) և կոլէժսկի ասէսորի որդի Կոնչէվիչ, դեկտեմբերի 16-ին 1883 թուին, Պետերբուրգում, առաջուց մըտածված դիտաւորութեամբ սպանեցին ժանդարմների գնդապետ Սուդէյկինին և ծանր վէրքեր հասցրին նրան ուղեկցող պաշտօնեայ Սուդովսկուն: Նիկոլաևի մեչչանին Անտոնով, 27 տարեկան, և Մոսկվայի մեչչանին Վօլոսով, 29 տարեկան, գործեցին հոկտեմբերի 17-ին և 24-ին Խարկովից ոչ հեռու մի զինաւորված յարձակումն փոստի վրա, կողոպտելու նպատակով, երկրորդ յարձակման ժամանակ մասնակցութեամբ մոսկիրեան մեչչանին Ելկօի, 25 տարեկան: Իսկ յարձակման միաք տուողը կոլէժսկի սովետնիկ Իվանովի որդին էր, 28 տարեկան: Անտոնով, Ելկօի դրդմամբ սպանեց յունվարի 8-ին 1884 թուին, Խարկովից ոչ հեռու, Շկրիօբա չինականին: Անտոնով, ստատկի սովէտնիկի որդի Կուզին, 21 տարեկան և օստրոգոժեան մեչչանին Լիվադին, 20 տարեկան նոյեմբերի 17-ին 1884 թուին յարձակում գործեցին Վ.օրոնէժից ոչ հեռու փոստի վրա և այդտեղ Անտոնով սպանեց փոստատարին: Իվանով, Գէյէր և դարձեալ մի քանի այլ մեղադրվածներ պատրաստեցին 1884 թուին Լուգանսկի մէջ ռումբեր, որոնցից երկուսը Լօպատին հասցրեց Պետերբուրգ, իսկ մնացածները պահում էին Ռոստով (Դոնի վրա) քաղաքում Նախիչևանի մեչչանին Պոպով, 23 տարեկան, և Բոգաչեվի մեչչանուհի Դօրրուսկինա 23 տարեկան: Ստարոդվորսկի գործեց օգոստոս ամսին 1883 թուին մի յարձակումն պոլիցիական պահապանների վրա, և նպատակ մի պետական յանցաւորի փախչելուն: Մեղադրվածներից ոմանք հիմնեցին գաղտնի տպարաններ և պահպանում էին այդ տպարանների բոլոր պարագաները: Դատարանը մայիսի 26-ից մինչև յունիսի 4-ը 1887 թուի իր կայացրած նիստերում դատապարտեց. Լօպատինին, Սալօվային, Սուխօմլինին, Իվանովին, Եակուբովիչին, Դօբրուսկինային, Ստարոդվորսկուն, Կոնչեվիչին, Ելկոյին, Անտոնովին, Վ.օրնովին, Կուզինին, Լիվադինին, Գէյերին, և Պոպովին՝ մահվան պատժի կախաղանի միջոցով. Եչինին և Բէլոուսովին՝ չորս տարվայ տաժանակիր աշխատանքի. Կիրսանովին չորս տարվայ բանտարկութեան: Մընացած երեքին դատարանը արդարացրեց: Սակայն մի և նոյն ժամանակ դատարանը խնդրագիր ներկայացրեց՝ որոշված պատիժը փոխարինել տաժանակիր աշխատանքով՝ Սուխօմլինին և Վ.օրնովին տասն և հինգ տարով, Կուզինին՝ տասն և երկու տարով, Դօբրուսկինային՝ ութ տարով, Ելկոյին և Գէյերին՝ չորս տարով: Բէլոուսովին պատժել աքսորելով Սիբիրի աւելի հեռու տեղերը, իսկ Եչինին, Պոպովին և Լիվատինին՝ Սիբիրի ոչ այնքան հեռու տեղ: Այդ վճիռը և խնդրագիրը վաւերացրած են յունիսի 15-ին Պետերբուրգի զինուորական շրջանի և թիկնապահ զօրքի գլխաւորի օգնականի ձեռքով, սրա հետ միասին Եչինին աքսորելու պատիժը փոխարինված է Ցօմսկի նահանգը ուղարկելով: Թագաւոր Կայսրը Բարձրագոյն հրամայեց կենաց չնորհել մահվան պատժին դատապարտվածներին, փոխարինելով դատաստանի որոշած պատիժը՝ տաժանակիր աշխատանքով,—Լօպատինին, Ստարոդվորսկուն, Կոնչեվիչին, Անտոնովին, և Իվանովին անորոշ ժամանակով, Սալօվային՝ 20 տարով, Եակուբովիչին՝ 18 տարով, իսկ Գէյերի՝ տաժանակիր աշխատանքի պատիժը փոխել՝ ուղարկելով դրան Ցօմսկի նահանգը:

ՎԻԵՆՆԻ, 17 յունիսի: Ցունիսի 12-ին Ակսայի մէջ նոյնպիսի սաստիկ երկրաշարժ կար, ինչպէս և Վէրնիյում. երկրաշարժը տևեց երկու րոպէ: Միւս օրը այնտեղ տեղի ունեցան 15 սաստիկ սորերկրեայ հարուածներ:

ԼՕՆԴՕՆ, 17 յունիսի: Արտաքին գործերի մինիստրի օգնականը, պատասխանելով համայնքների ժողովում անգլո-թրքական դաշնագրի վերաբերութեամբ եղած հարցին, յայտնեց, որ ոչինչ առիթ չը կայ ենթադրելու, որ դաշնագիրը կարող է պատերազմ առաջ բերել Անգլիայի և ուրիշ մի որ և է պետութեան մէջ: Հնդկաստանի փոխ-արքան հաղորդում է, որ Աւգանիստանում յունիսի 16-ին տեղի ունեցաւ մեծ կռիւ. բայց թէ ով յաղթեց,—առ այժմ յայտնի չէ:

ՓԱՐԻԶ, 17 յունիսի: Պատերազմական մինիստրը յայտնեց բիւդժետային յանձնաժողովին, որ փորձնական ոպառազինութիւնը 8 միլիոն ֆրանկ ծախք կունենայ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 յունիսի: Հրատարակված է Սենատին տուած Բարձրագոյն հրաման, որը վերաբերում է այս տարի իսկական ծառայութեան կանչվող մարդկանց թիւին, որով հրամայվում է 1887 թուին, պահպանելով զինուորագրական ընդհանուր կանոնադրութեան պահանջած կարգերը, կանչել. 1) Այն բոլոր տեղերից, որոնց վրա տարածվում է այդ կանոնադրութեան զօրութիւնը, զօրաբանակը և նաւատորմը լրացնելու համար՝ 235,000 մարդ, հաշուելով այդ թիւի մէջ և նրանց, որոնց առաջիկայ զինուորակոչութեան ժամանակ կը տրվեն զինուորական ծառայութիւնից ազատող բեկրուտական վկայագրեր և 2) Թերքի և Կուբանի վիճակներից և Անդրկովկասեան բնիկ ազգաբնակութիւնից զինուորակոչութեան համար կանչել 2,400 մարդ, Կովկասում տեղաւորվող առանձին զօրք կազմակերպելու համար:

ՍԻՄԼԱ, 18 յունիսի: Գիլզաների և էմիրի զօրքերի մէջ ընդհարումը՝ Գօլամխայդեր-խանի գլխաւորութեամբ՝ տեղի ունեցաւ Խատդէի մօտ: Գիլզաները յաղթվեցան և մեծ կորուստ ունեցան:

ՎԻԵՆՆԱ, 18 յունիսի: Միլան թագաւորը գընաց Ադիլբերդ, (Կրայնի մէջ), որտեղ գտնվում է հռչակաւոր քարանձաւ. այդ տեղից նա կուղևորվի, մի շաբաթով, Աբբացի:

ՓԱՐԻԶ, 18 յունիսի: Տիրնօվայից եկած լուրերին նայելով, Ստամբուլով բրիտանական հիւպատոսի մօտ, ճաշի ժամանակ յայտնեց, որ բոլգարական ազգային ժողովը Բոլգարիայի գահի համար կընտրի Կօբուրգի իշխանին: Ստամբուլով ենթադրում է, որ իշխանը կընդունի այդ ընտրութիւնը, իսկ եթէ կը հրաժարվի, այն ժամանակ հարկաւոր կը լինի ընտրել իշխան Բատտենբերգին:

ՍՕՖԻԱ, 18 յունիսի: Յունիսի 12/24-ին Ֆիլիպօպոլի քաղաքային վարչութեան կողմից տուած ճաշի ժամանակ, Ստամբուլով, պատասխանելով մէրի ճառին, ասաց. «Ճգնաժամի վերջանալը արդէն մօտ է. կատարվութիւնը վճռական մտա-

դրութիւն ունի առաջարկել ազգային մեծ ժողովին մի այնպիսի թեկնածու, որը բաւարարութիւն տար իր պայմաններին»:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 յունիսի: Այս օրերս գնում է Սեմիրեչինսկի վիճակը մի առանձին յանձնաժողով, գեներալ Զուրովի առաջնորդութեամբ, երկրաշարժից վնասված ազգաբնակութեանը օգնութիւն հասցնելու համար: Այնտեղ գնում է մի և նոյն ժամանակ և մի գիտնական խումբ, պրոֆեսոր Մուշկետովի առաջնորդութեամբ. խումբը, ի միջի այլոց, կը զբաղվի և մի աւելի անվտանգ տեղ փնտռելով, որտեղ կարելի լիներ քաղաք շինել՝ քանդված Վէրնիի փոխարէն:—«Русское Дѣло» լրագրի հրատարակութիւնը դադարեցրած է երկ ամսով, այն պատճառով, որ նա իր № 9-ի մէջ խախտել է, առանց ցենզուրայի լոյս տեսնվող ժամանակաւոր հրատարակութիւններին 1886 թւի հոկտեմբերի 23-ին յայտնած կարգադրութիւնը:

ԼՕՆԴՕՆ, 18 յունիսի: Երէկ ցերեկով, պալատի այգիում, կայացաւ մեծ հանդէս, որին ներկայ էին 7,000 մարդ: Երէկ երեկոյեան Մեծ Իշխան Սերգէյ Ալէքսանդրովիչ ուղևորվեց Դարմշտատ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 յունիսի: Մեծ Իշխան Կոնստանտին Նիկոլաևիչ իր ընտանիքով նուիրեց 5,000 ր. յօգուտ Վերնիում եղած երկրաշարժի վնասվածների:

ՄՕՍԿՎԱ, 19 յունիսի: Մոսկվայի վաճառականութեան ներկայացուցիչների ժողովը յօգուտ Վէրնիում վնասվածների նշանակեց 10,000 ր. և յօգուտ Կոստրոմայի հրկիզեալների—3,000 ր.:

ԲԵՐԼԻՆ, 19 յունիսի: «National Zeitung» հաստատ աղբիւրից տեղեկութիւն է ստացել սերբական թագաւորի և կոմս Կալնոկիի մէջ յունիսի 16-ին եղած խօսակցութեան մասին: Թագաւորը յայտնեց, որ Բիստիչի մինիստրութեան ժամանակն ևս ինքն կունենայ գլխաւոր դերը քաղաքականութեան մէջ, և որ դէպի Աւստրիան իր ունեցած պարտաւորութիւնները կատարելու համար աղնիւ խօսք է տուել և այդ պարտաւորութիւնները խախտելու համար չի թագնվի մինիստրութեան պատասխանատուութեան տակ: Թագաւորը ասեց, որ ինքն Բիստիչին դիմեց նեղքին դրութեան դժուարութիւնները աչքի առաջ ունենալով և այն պատճառով, որ Բիստիչ վայելում է սկուպչինայի մեծամասնութեան վստահութիւնը: Կալնոկի յայտնեց, որ Աւստրիան մտադիր չէ ճնշել Սերբիայի ազատութիւնը և նա զորձ չունի Բիստիչի անցեալի և անձնական դիտաւորութիւնների հետ, մանաւանդ որ նրա առաջին քայլերը գրաւեցին Աւստրիայի հաւատը դէպի նրան, որը, այսինքն Աւստրիան, մինչև անգամ գոհ է նրա Ռուսաստանի մօտենալու փորձերից, որովհետև, չնորհիւ դրան, Աւստրիան կաղտավի շատ դժուարութիւններից: Աւստրիայի վերաբերութեամբ Սերբիան կը կատարի իր պարտաւորութիւնները, եթէ իսկապէս կը հետևի ազատ քաղաքականութեանը, սանձահարելով սերբական ծայրայեղ ազգասէրների ձգտումները և խուսափելով ընդհանուր խաղաղութեան համար վտանգաւոր մտադրութիւններից:

ԼՕՆԴՕՆ, 19 յունիսի: Համայնքների ժողովին հաղորդված է, որ Ռուսաստանից և Ֆրանսիայից անգլօ-թրքական դաշնագրի վերաբերմամբ ոչինչ յայտարեր չէ ստացել անգլիական կառավարութիւնը. իսկ սուլթանը ժամանակ պահանջեց և չը պարտաւորվեց վաւերացնել դաշնագիրը որոշեալ ժամանակամիջոցում:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բանալով ՇՈՒՇԻՈՒՄ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ ԵՒ ԿԱԶՄԱՐԱՐԱՆՈՑ և ստանձնելով Շուշու Հայոց Հոգևոր տեսչութեան ՏՊԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՊԱՇՏՕՆԸ. ընդունում ենք ամեն տեսակ գրքեր կօմիսիայով վաճառելու. նոյնպէս և յանձն ենք առնում տպարանական պատուէրներ՝ ամենաէժան գներով:

Մեր հասցէն: Шуша, въ книжный и переплетный магазинъ Бр. Дадианъ.
2—5 Հ. Շ.

Սոֆիա Ալէքսանեան Ղորղանեան և Մարթա Խօսրովեան փարէմուզեան խնդրում են ազգականներին և ծանօթներին շնորհ բերել առաջինի ամուսնու և երկրորդի փեսայի՝ ՓԱՐԷՄՈՒԶ ՌՈՄԱՆԵԱՆ ՂՈՐՂԱՆԵԱՆՑԻ մահուան տարեդարձի հոգեհանգստին, որը կատարվելու է յունիսի 21-ին կիրակի, 10 ժամին Մողնու ս. Գէորգ եկեղեցում:
1—1

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Լաբօրատօրնայա փողոց, № 11)

Ցանկացողք, ունենալ իրանց առևտրական գործերի համար, սոյն յունիս ամսում ուսման ընթացքը աւարտած ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանցին: Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ատեստատներ:

Ընդունելութիւնները սկսվելու են օգոստոսի 25-ից: Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Յովհաննէսների բանկային դրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, учредителю курсовъ С. П. Мануэльянцу.
2—5 (Ե. Շ.)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ ամեն օր ժամասաց լինելու համար ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ երեք տարով, ՎԵՑ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ, շատ ընտիր ձայնով, և հայկական ձայնագրութիւն իմացող: Պատրաստ կունենան բնակարան, մնունդ և հագուստ: Բացի ձայնագրութիւնից սովորելու են կրօն, հայերէն և ռուսերէն լեզուները: Ցանկացողները թող դիմեն Петербургъ, Арм. Архимандриту Хорену Степанэ. Невскій проспектъ, домъ армянскій церкви.
2—3

EXPORTATION-IMPORTATION

CONSTANTIN P. CHÉHIANTZ

MILAN (ITALIE)

Կոնստանտին Պ. Շեհեանցի առևտրական գրասենեակը լինելով ՄԻԼԱՆ, և ունենալով ուղղակի յարաբերութիւններ Իտալիայի, Շվէյցարիայի և Ֆրանսիայի ֆաբրիկանտների հետ, կընդունի յանձնարարութեամբ ապրանքներ ծախելու համար հետևեալները՝ մետաքս, բաժաժ, մետաքսի և բաժաժի մնացորդք, բուրդ, բամբակ, ցորենեղէն, նաւթ և ընդհանրապէս Կովկասեան միւս ամեն տեսակ ապրանքները, որոնք ծախվում են Եւրոպայում: Ցանձնարարութեամբ կընդունի դարձեալ առնել Եւրոպայի ամեն տեսակ ապրանքներ Կովկասի համար: Ամբողջ ապրանքները ստանալուց աժան և ձեռնտու պայմաններով փող կը տայ ի հաշիւ. մանրամասն տեղեկութեանց համար գրել այս հասցէով. Monsieur Constantin P. Chéhiantz, № 18, Via Lauro, Milan, (Italie) МИЛАНЪ (Италія).

ԷԼԻԿՍԻՐ ԱՏԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ (ELIXIR DENTIFRICE)

ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ՀԱՅՐԵՐԻ

ՍՈՒԼԻԱԿԻ ԱԲԲԱՅՈՒԹԻՒՆԻՑ (GIRONDE)

Ատամների համար Բենեդիկտեան հայրերից պատրաստած էլիկսիրի ամենօրեայ գործածութիւնը, մի քանի կաթիլներ ջրի մի կէս բաժակի մէջ, պահպանում է ատամները փչանալուց, սպիտակ է դարձնում և պնդացնում է ատամները, մաքրում է և պահպանում է ծնօտը:

ԳԻՆԸ դօրակը 2 և 8 ֆրանկ. Փոչին՝ արկղիկը 1 ֆրանկ 25 սանտ. Պաստա՝ արկղիկը 2 ֆրանկ:

Հիմնարկութիւնը գոյութիւն ունի 1804 թվից.

Գլխաւոր ագէնտ SEGUIN, Բօրդօ (Ֆրանսիա).

ԹԻՖԼԻՍՈՒՄ ծախվում է պ. Բերլըմօնի մագազինում և պարֆիւմէրների ուրիշ մագազիններում: ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍՈՒՄ. Է. Ա. Էնկէնի և Գ. Ա. Օաիովի մօտ:
32—48

ԹՈՒԼՏԻՈՒԹՆԱՄԲ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Էլէկսիր-Melange. Մազերի արագ և առատ բուսացնելու համար և նրանց պահպանելու թափվելուց: Գինը 2 ր. սրուակի համար, գործածութեան հրահանգի հետ միասին, ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով:

Բալզամ—Eugénie. դափնեա և պրակի փունջի ծաղիկներից, երեսին, շլինքին և ձեռքերին քնքշութիւն և փափկութիւն, նոյնպէս և մարմարիօին սպիտակութիւն տալու համար, շուշանի և վարդի անուշահոտութեամբ, նոյն պէս կաչու անհարթութիւնը և բիծերը ոչնչացնելու: Գինը 1 ր. 75 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով:

Կարմրադեղ—Eugénie. հեղուկ, թուշերին և ականջներին բնական վարդի գոյն տալու, որ չէ փոխվում էլէկտրական լուսաւորութեան ժամանակ և որ չէ սրբվում երեսի քրտինքից: Առաջարկվում է մանաւանդ թատրոնների և պարահանդէսների համար: Գինը 1 ր. 50 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով:

Այդ բոլոր երեք կօսմէտիական արդիւնքները բժշկական վարչութեան վկայութեամբ, չեն պարունակում իրանց մէջ որ և է վնասակար նիւթեր: Բէրթա Բիս.

ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆ ՍՏԱՅԱԾ ՊՕՄԱԴ

իսկական «Pasta Eugénie», դերազանց միջոց կաչու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատահող ուրիշ անախորժ երևոյթների դէմ: Տալիս է երեսի գոյնին երիտասարդական թարմութիւն և գեղեցկութիւն: Գինը մի սրուակի համար 1 ր. 60 կ.

Քինին-զլիցէրինեան պօմադ պերուական բալզամից, մազերը սնդայնելու, խատցնելու և մեծացնելու համար: Գ. 2 ր. սրուակի համար:

Ձեռքերի պօմադ: Գինը սրուակի համար 1 ր. 30 կ.: Իւրաքանչիւր սրուակի վրա գտնվում է պաշտպանողական դրոշմ, մի «հրեշտակ» և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».

Իսկական «Poudre-Eugenie» սպիտակ և վարդագոյն փոշի. Գ. արկղիկի, վրձինով 1 ր. 50 կ. առանց վրձինի 1 ր. 20 կ.

Մազերի ներկը երեք գոյնի. սև, շագանակագոյն և բաց-շէկ. Գ. արկղիկի 3 ր. Ներկը «Բիս Գուտմանի» գործարանի:

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում Վ. Գրիվնակի դեղատան ապրանքների մագազինում, «Լօնդոն» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը: 98—100

Գ. ԿԷՐԷՐԻ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Հերոֆոնների ֆաբրիկայի միակ ագէնտի մօտ, Կովկասում, Միքայէլեան փողոցում, № 84, ստացված են մեծ քանակութեամբ

ՀԵՐՕՖՕՆՆԵՐ

կատարելագործված, դուրեկան ձայնով, նոյնպէս լաւ ընտրութիւն նօտաների Հերոֆոնի համար: Օտարաքաղաքացիների պահանջները ճշդութեամբ և առաջին փոստայով են կատարվում: Նօտաների կատալոգները՝ թէ Հերոֆոնների և թէ Արիստոնների համար, ըստ պահանջման ուղարկվում են անվարձ:
16—20

Дозволено цензурою, Тифлисъ 19 Іюня 1887 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская ул. д. каз